

**ԱԿՏՈՍԵՔԵՆԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 34ՓԲԸ-ԳՅԾԶԲ-22/13**

ք.Երևան

«30» նոյեմբերի 2022թ.

«ՀԱՏՈՒԿ ԿԱՊ» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն՝ Մ.Ղասաբոյյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տիգրան Մեյքյան» ԱԶ-ն, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Զննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ կշեղվել փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքստոլ փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 (հինգ)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **մինչև 15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQ = UQ / LQ \times D \times E$, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Ե-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ Նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:²⁵

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Հատուկ Կապ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4/129
«Ինելկոմբանկ» ՓԲԸ,
Հ/Հ 2052822133751001
ՀՎՀՀ 02509254
Տնօրեն՝ Մ. Մարտիրոսյան



Կ Ա Տ Ա Ր ՈՂ

«Տիգրան Մելիքյան» ԱԶ
ՀՀ, ք. Երևան, Զանաքեռ-2եյթոն,
Կամարակ 1 կրթ./ 15տուն
«Այրի բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 11813018728900
ՀՎՀՀ 26558367
Տ. Մելիքյան



²⁵ Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պայմով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՆԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը*
1	50111130/504	դրամ	Մինչև 15000000 ՀՀ դրամ	1	420 օրվա ընթացքում ըստ Պատվիրատուի պահանջի

Ծառայության տեխնիկական բնութագիրը

Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ կյուրատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝

- սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն,
- պետք է ունենա վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (ընթացամասի, էլեկտրականության, յուղման, անվաբացքի կարգավորման, վուլկանացման, ինժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, շարժիչի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, մեքենայի պիտոորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ, ինչպես նաև՝ զոդման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն),
- Կատարողը պետք է ունենա առնվազն 2 (երկու) հատ էլ. ամբարձիչ, առնվազն 2,5 տոննա բարձրացնելու հնարավորությամբ (домкрат),
- Կատարողը պետք է ունենա առնվազն թվով 3 (երեք) ավտոմեքենայի համար նախատեսված կայանման (պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկում ապահովելով իրականացված տեսաձայնագրության առնվազն 30 (երեսուն) օրվա պահպանություն, որը պահանջի դեպքում 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին:

Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց պահից Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտահերթ սպասարկում և մեկ ժամվա ընթացքում իրականացնի ավտոմեքենայի պիտոորոշումը (բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում մեկ ժամվա ընթացքում ածորոշման իրականացման անհնարիության վերաբերյալ)՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, անհրաժեշտ ապրանքների և նյութերի, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված առանձին տեսակի ծառայությունների ցանկին՝ SU 1, SU 2), ընդ որում՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 2 օրից (որի հաշվարկը կատարվում է Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց պահից), բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:

Վերաբերյալ, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման տեսապասարկման կենտրոն Կատարողը ՀՀ ողջ տարածքում պետք է ապահովի ավտոմեքենայի տեղափոխումը տեսապասարկման կենտրոն ավտոքարշակի միջոցով, ընդ որում՝ հնարավորության դեպքում ավտոտեխսպասարկումը նաև կարող է իրականացվել տեղում առանց ավտոմեքենան տեխսպասարկման կայան հասցնելու:

Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել թվով 3 (երեք) ավտոմեքենա և իրականացնել աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին շուրջօրյա (24ժամ) սպասարկում, ընդ որում Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի տեխսպասարկումը ՀՀ բոլոր մարզերում հաշվի առնելով, որ ավտոմեքենայի սպասարկումը պետք է իրականացվի այն մարզում որտեղ տվյալ ավտոմեքենան խափանվել է (առանց ավտոմեքենան Երևան տեղափոխելու):

Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:

Ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան: Երաշխիքներ՝ կատարված աշխատանքներ համար 6 ամիս, պահեստամասերի համար 6 ամիս, ռետինե դետալների համար 6 ամիս:

Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

ՑԱԼԿ
Առանձին տեսակի ծառայությունների

Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղների և այլ օժանդակ նյութերի անվանումները	Наименования запасных частей, смазочных материалов и других вспомогательных средств, используемых в службах TS-1, TS-2 и TS-2	1 ՉԱՓԱՐԱԾԻՆ			
			Տոյոտա-Կորոլա 1.4, ետևի քաշող, թեթև մարդատար, 5 տեղանոց, թողարկման տարեթիվը՝ 2008, փոխանցման տուփը մեխանիկական	Տոյոտա-Քեմրի 2.4, ետևի քաշող, թեթև մարդատար, 5 տեղանոց, թողարկման տարեթիվը՝ 2007, փոխանցման տուփը ավտոմատ	Ֆոլկվագեն Կադդի 1.6 (Volkswagen Caddy), բեռնատար, ֆուրգոն, առջևի քաշող, թողարկման տարեթիվը՝ 2008, փոխանցման տուփը մեխանիկական	Ռենո լոգան (Renault Logan Stepway) 1.6, առջևի քաշող, թեթև մարդատար, 5 տեղանոց, թողարկման տարեթիվը՝ 2020, փոխանցման տուփը՝ 5 աստիճան մեխանիկական
			1	2	3	4
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	Наименование услуг, включенных в TS-1	Ծառայության մատուցման համար սահմանված միավոր զևեր**			
* 1	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	833.2599	833.2599	833.2599	833.2599
2	Սառեցման համակարգի ստուգում	Проверка системы охлаждения	833.2599	833.2599	833.2599	833.2599
3	Յուղման համակարգի ստուգում	Проверьте масляную систему	833.2599	833.2599	833.2599	833.2599
4	Արտացման համակարգի ստուգում	Проверка выхлопной системы	833.2599	833.2599	833.2599	833.2599
5	Կցորդման համակարգի ստուգում	Система проверки навесного оборудования	833.2599	833.2599	833.2599	833.2599
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы ПТ	833.2599	833.2599	833.2599	833.2599
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы EMP		833.2599		
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	Проверьте передний и задний мосты	833.2599	833.2599	833.2599	833.2599
11	Առջևի և հետևի կախիցների աշխատանքի ստուգում	Проверьте работу передней и задней подвески	833.2599	833.2599	833.2599	833.2599
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работоспособности тормозной системы	833.2599	833.2599	833.2599	833.2599
13	ABS համակարգի ստուգում	Проверка системы ABS	833.2599	833.2599	833.2599	833.2599
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работоспособности электрической системы	833.2599	833.2599	833.2599	833.2599
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	Проверка работоспособности системы управления	833.2599	833.2599	833.2599	833.2599
16	Թափքի վիճակի ստուգում	Проверка тела	833.2599	833.2599	833.2599	833.2599
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	Проверка качества и уровня различных агрегатных масел	416.63	416.63	416.63	416.63
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը	Наименование услуг включенных в TS-2				
	1.Շարժիչ	1 Двигатель				
18	Շարժիչի հանում և տեղադրում	Снятие и установка двигателя	12498.9	12498.9	12498.9	12498.9
20	Նույնը կոնդիցիոներների դեպքում	То же самое с кондиционером	12498.9	12498.9	12498.9	12498.9
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	То же самое относится и к АВА		12498.9		
22	Շարժիչի մասնակի ստուգում	Частичная проверка двигателя	2499.78	2499.78	2499.78	2499.78
23	Շարժիչի վերանորոգում	Ремонт двигателя	41663	41663	41663	41663
26	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	Снятие и установка подушки двигателя	4166.3	4166.3	4166.3	4166.3
27	Բլոկի հոկում	Блочная полировка	12498.9	12498.9	12498.9	12498.9
28	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	Снятие и установка крышки вала	4166.3	4166.3	4166.3	4166.3

31	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	Снятие и установка головки блока цилиндров	8332.599	8332.599	8332.599	8332.599
33	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	Замена головки двигателя	4999.559	4999.559	4999.559	4999.559
34	Շարժիչի գլխիկի վերանորոգում	Ремонт головки двигателя	16665.2	16665.2	16665.2	16665.2
35	Փակված խցուկի փոխարինում	Замена прокладки клапана	4166.3	4166.3	4166.3	4166.3
37	Բաշխիչ լիտեռի հանում և տեղադրում	Снятие и установка распределительного вала	8332.599	8332.599	8332.599	8332.599
41	Բաշխիչ լիտեռի խցուկի փոխարինում	Замена прокладки распределительного вала	4166.3	4166.3	4166.3	4166.3
42	Հրիչների փոխարինում SOHC	Замена горелки SOHC	4166.3	4166.3	4166.3	4166.3
44	Ատամավոր փոկի փոխարինում	Замена зубного уплотнения	4166.3	4166.3	4166.3	4166.3
47	Ծնկած և լիտեռի առջևի խցուկի փոխարինում	Замена сальника передней сальника	4166.3	4166.3	4166.3	4166.3
48	Նույնը կոնդիցիոների դեպքում	То же самое с кондиционером	4166.3	4166.3	4166.3	4166.3
53	Ծնկած և լիտեռի հետևի խցուկի փոխարինում	Замена сальника задней прокладки вала	12498.9	12498.9	12498.9	12498.9
54	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	То же самое относится и к АВА		12498.9		
55	Մխոցային օդակների փոխարինում	Замена цилиндра	8332.599	8332.599	8332.599	8332.599
58	Թափանիվի հանում և տեղադրում	Снятие и установка ротанга	8332.599	8332.599	8332.599	8332.599
59	Թափանիվի պասակի փոխարինում	Замена малиновой короны	8332.599	8332.599	8332.599	8332.599
60	Խցիկի գտիչի փոխարինում	Замена фильтра камеры				
	2. Դեկավարման, սնման և յուղման համակարգ	2 Система управления подачи и смазки				
61	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	Замена масла и масляного фильтра	833.2599	833.2599	833.2599	833.2599
62	Յուղի պոմպի փոխարինում	Замена масляного насоса	5832.819	5832.819	5832.819	5832.819
65	Համակարգչային ախտորոշում	Компьютерная диагностика	3333.04	3333.04	3333.04	3333.04
66	Դեկավարման բլոկի վերանորոգում	Ремонт блока управления	12498.9	12498.9	12498.9	12498.9
67	Բռնկման կարգավորում	Настройка зажигания	2499.78	2499.78	2499.78	2499.78
68	Պարապ ընթացքի կարգավորում	Время простоя	2499.78	2499.78	2499.78	2499.78
69	CO կարգավորում	CO регулирование	833.2599	833.2599	833.2599	833.2599
70	Խարնարակի հանում և տեղադրում	снятие и установка ягненка				
71	Խարնարակի վերանորոգում	Гарнар ремонт				
72	Օդի գտիչի փոխարինում	Замена воздушного фильтра	833.2599	833.2599	833.2599	833.2599
73	Կոնդիցիոների գտիչի փոխարինում	Замена фильтра кондиционера	833.2599	833.2599	833.2599	833.2599
74	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	Замена вилок двигателя	2499.78	2499.78	2499.78	2499.78
75	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	Очистка вилок двигателя	6666.079	6666.079	6666.079	6666.079
76	Բենզամղիչի փոխարինում	Замена бензина	4166.3	4166.3	4166.3	4166.3
77	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի մաքրում	Очистка бензобака бензиновой сети	1666.52	1666.52	1666.52	1666.52
78	Վառելիքի գտիչի փոխարինում	Замена топливного фильтра	833.2599	833.2599	833.2599	833.2599
79	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	Снятие и установка топливного бака	8332.599	8332.599	8332.599	8332.599
80	Վառելիքի մղիչի կարգավորում	Регулировка топливного насоса	833.2599	833.2599	833.2599	833.2599
81	Ընթացքային մասի յուղում	В процессе масло	2499.78	2499.78	2499.78	2499.78
82	Ներծող վառելիքի պոմպի փոխարինում	Замена абсорбирующего топливного насоса	2499.78	2499.78	2499.78	2499.78

	3. Սառեցման և արտաձման համակարգ	3 Система охлаждения и выпуска				
86	Կոնդիցիոների փոկի փոխարինում	Замена уплотнения кондиционера	1666.52	1666.52	1666.52	1666.52
87	Հովիտարի հանում և տեղադրում	Снятие и установка вентилятора	4166.3	4166.3	4166.3	4166.3
88	Ռադիատորի հանում և տեղադրում	Снятие и установка радиатора	4166.3	4166.3	4166.3	4166.3
89	Նույնը կոնդիցիոների դեպքում	То же самое с кондиционером	4166.3	4166.3	4166.3	4166.3
90	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	То же самое относится и к АВА		4166.3		
91	Ռադիատորի վերանորոգում	Ремонт радиатора	12498.9	12498.9	12498.9	12498.9
92	Անտիֆրիզի փոխարինում	Замена антифриза	833.2599	833.2599	833.2599	833.2599
93	Թերմոստատի փոխարինում	Замена термостата	4166.3	4166.3	4166.3	4166.3
94	Թերմոստատի միջադիրի փոխարինում	Замена подушки термостата	4166.3	4166.3	4166.3	4166.3
95	Սառեցման համակարգի օդիանում	Система охлаждения вентиляция	1666.52	1666.52	1666.52	1666.52
96	Ջրի պոմպի փոխարինում	Замена водяного насоса	8332.599	8332.599	8332.599	8332.599
97	Ջրի պոմպի վերանորոգում	Ремонт водяного насоса				
98	Նույնը DOHC և V-6 դեպքում	То же самое с DOHC и V-6				
99	Նույնը կոնդիցիոների դեպքում	То же самое с кондиционером				
100	Գեներատորի փոկի փոխարինում	Замена уплотнения генератора	1666.52	1666.52	1666.52	1666.52
101	Գեներատորի փոկի ձգող հորվակի փոխարինում	Замена трейлера генератора	2499.78	2499.78	2499.78	2499.78
102	Ընդարձակող բաքի փոխարինում	Замена расширительного бачка	1249.89	1249.89	1249.89	1249.89
103	Խլարարի հանում և տեղադրում	Снятие и установка глушителя	4166.3	4166.3	4166.3	4166.3
105	Խլարարի զոֆրայի փոխարինում	Сменный глушитель	4166.3	4166.3	4166.3	4166.3
106	Ռադիատորի փողոկի հանում և տեղադրում	Снятие и установка шланга радиатора	1666.52	1666.52	1666.52	1666.52
107	Կափույրի միջադիրի փոխարինում	Замена клапанной подушки	5832.819	5832.819	5832.819	5832.819
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	4 Приложение ПА и ДПА				
108	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	Вапу или голова снятие и установка цилиндров	6666.079	6666.079	6666.079	6666.079
109	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	Вапу или голова ремонт цилиндров	6666.079	6666.079	6666.079	6666.079
110	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	Замена приводных дисков и подшипников	12498.9	12498.9	12498.9	12498.9
111	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	Снятие и установка педали прицепа	1666.52	1666.52	1666.52	1666.52
112	Կցորդման ճոպակի հանում և տեղադրում	Снятие и установка крепежного троса	1666.52	1666.52	1666.52	1666.52
113	ՓՏ-ի հանում և տեղադրում	Извлечение и установка ПА	12498.9	12498.9	12498.9	12498.9
114	ՓՏ-ի վերանորոգում	Ремонт РА	41663	41663	41663	41663
115	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	Замена подшипников ПТ	1666.52	1666.52	1666.52	1666.52
116	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	Снятие и установка корпуса ПТ	1666.52	1666.52	1666.52	1666.52
117	ՓՏ-ի յուղի փոխարինում	Замена масла ОТ	1666.52	1666.52	1666.52	1666.52
118	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	Замена привода спидометра	1666.52	1666.52	1666.52	1666.52
119	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	Снятие и установка LMP-преобразователей		2499.78		
120	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	Замена привода на DPA		2499.78		
125	ԱՓՏ-ի համակարգչի նորոգում	Ремонт компьютеров DPA		16665.2		

127	ԱՓՏ-ի յուղի գոլիչի փոխարինում	Замена масляного фильтра LPG		4166.3		
	6. Առջևի և հետևի կամրջակներ	6 Передний и задний мосты				
135	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	Снятие и установка передних или задних мостов	8332.599	8332.599	8332.599	8332.599
136	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	Передний или задний мост полное уничтожение и сбор	8332.599	8332.599	8332.599	8332.599
137	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	Передний или задний мост частичный снос и сбор	8332.599	8332.599	8332.599	8332.599
138	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.	Передний или задний мост снятие и установка полуоси	8332.599	8332.599	8332.599	8332.599
139	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	Замена оси ступицы	8332.599	8332.599	8332.599	8332.599
	7. Կախոց	7 Подвеска				
140	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	Полная разборка и сборка передней подвески	12498.9	12498.9	12498.9	12498.9
141	Տրավերսի հանում և տեղադրում	Снятие и установка траверс	12498.9	12498.9	12498.9	12498.9
142	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	Снятие и установка левого или правого сустава	5832.819	5832.819	5832.819	5832.819
143	Անվակունդի շպիլկայի և հեղուկի փոխարինում(մեկ անիվի համար)	Замена инвалидной коляски и звездочки (для одного колеса)	1666.52	1666.52	1666.52	1666.52
144	Անվակունդի առանցքակալի փոխարինում	Замена подшипника ступицы колеса	5832.819	5832.819	5832.819	5832.819
145	Անվակունդի փոխարինում	Замена инвалидной коляски	5832.819	5832.819	5832.819	5832.819
146	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	Замена подшипника задней оси	5832.819	5832.819	5832.819	5832.819
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	Замена левого или правого сустава	5832.819	5832.819	5832.819	5832.819
148	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	Замена левого или правого шарнирного подшипника	833.2599	833.2599	833.2599	833.2599
149	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	Замена амортизатора	4166.3	4166.3	4166.3	4166.3
150	Չսպանակի հանում և տեղադրում	Снятие и установка пружины	4166.3	4166.3	4166.3	4166.3
151	Չսպանակի հանում և տեղադրում	Снятие и установка лифта				
152	Չսպանակի վռանների փոխարինում	Сменные тормозные колодки				
153	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	Снимите и установите передний амортизатор	4166.3	4166.3	4166.3	4166.3
154	Ներքևի լծակի հանում և տեղադրում	Снятие и установка нижнего рычага	5832.819	5832.819	5832.819	5832.819
155	Ներքևի լծակի վռանների փոխարինում	Замена нижних рычагов палаток	5832.819	5832.819	5832.819	5832.819
156	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	Снятие и установка правой или левой передней пружины	4166.3	4166.3	4166.3	4166.3
157	Միջին ձգանի հանում և տեղադրում	Снятие и установка среднего триггера	4166.3	4166.3	4166.3	4166.3
158	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	Снятие и установка поворотного рычага	4166.3	4166.3	4166.3	4166.3
159	Վերևի լծակի հանում և տեղադրում	Снятие и установка верхнего рычага	4166.3	4166.3	4166.3	4166.3
160	Վերևի լծակի վռանների փոխարինում	Замена верхних рычажных тентов	4166.3	4166.3	4166.3	4166.3
161	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում	Замена задней верхней рычажной палатки	4166.3	4166.3	4166.3	4166.3
162	Գնդե հողակապերի փոխարինում	Замена шаровых опор	3333.04	3333.04	3333.04	3333.04
163	Ծայրականների հանում և տեղադրում	Удаление и установка братств	2499.78	2499.78	2499.78	2499.78

164	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	Снятие и установка переднего стабилизатора	1666.52	1666.52	1666.52	1666.52
165	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	Замена переднего стабилизатора тента	1666.52	1666.52	1666.52	1666.52
166	Առջևի կայունարարի կանգնակների փոխարինում	Замена переднего стабилизатора	2499.78	2499.78	2499.78	2499.78
167	Հետևի գսպանակի փոխարինում	Замена задней пружины	4166.3	4166.3	4166.3	4166.3
168	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	Снятие и установка заднего амортизатора	3333.04	3333.04	3333.04	3333.04
169	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	Снятие и установка ретрактора	5832.819	5832.819	5832.819	5832.819
170	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	Снятие и установка задней рейки	5832.819	5832.819	5832.819	5832.819
171	Հետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	Сечение задней подвески	5832.819	5832.819	5832.819	5832.819
172	Սայլենտ բլոկի փոխարինում	Замена сайлентблока	5832.819	5832.819	5832.819	5832.819
173	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	Снятие и установка кронштейнов стабилизатора	3333.04	3333.04	3333.04	3333.04
174	Հետևի կայունարարի վրանների փոխարինում	Замена задних ступиц стабилизатора	4166.3	4166.3	4166.3	4166.3
175	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	Снятие и установка заднего диагонального рычага	4166.3	4166.3	4166.3	4166.3
176	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում	Замена диагональных рычагов палаток	4166.3	4166.3	4166.3	4166.3
177	Անվաբացքի կարագավորում	Кейтеринговые услуги:	4166.3	4166.3	4166.3	4166.3
178	Հետևի վերևի գնդե հողակապի փոխարինում	Замена верхнего шарового шарнира	4166.3	4166.3	4166.3	4166.3
179	Հետևի կախոցի գնդե հողակապի վերանորոգում	Ремонт шарнира задней подвески	2499.78	2499.78	2499.78	2499.78
180	Հետևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	Полный снос и снятие задней подвески	8332.599	8332.599	8332.599	8332.599
181	Հետևի կախոցի անվաբացքի կարագավորում	Регулировка шин задней подвески	4166.3	4166.3	4166.3	4166.3
182	Չողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	Паяльные работы на 1 кв См	833.2599	833.2599	833.2599	833.2599
	8. Ղեկային մեխանիզմ	8 Рулевой механизм				
183	Ղեկային կայունի հանում և տեղադրում	Снятие и установка инвалидных колясок	4166.3	4166.3	4166.3	4166.3
185	Ղեկային կայունի վերանորոգում	Ремонт рулевого колеса	8332.599	8332.599	8332.599	8332.599
186	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում	Замена подшипника FC и / или шины	2499.78	2499.78	2499.78	2499.78
187	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	Снятие и установка стыков ПМ	4166.3	4166.3	4166.3	4166.3
188	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	Снятие и установка гидравлического насоса	4166.3	4166.3	4166.3	4166.3
190	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	Снятие и установка гидравлического уплотнения	2499.78	2499.78	2499.78	2499.78
192	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	Снятие и установка гидравлического шланга	2499.78	2499.78	2499.78	2499.78
194	Նույնը կոնդիցիոների դեպքում	То же самое с кондиционером	2499.78	2499.78	2499.78	2499.78
195	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	Снятие и установка PWC	4166.3	4166.3	4166.3	4166.3
196	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	Реконструкция PWC	8332.599	8332.599	8332.599	8332.599
197	Ղեկային ձողի փոխարինում	Замена рулевой колонки	4166.3	4166.3	4166.3	4166.3
198	Ղեկային ձողի ծայրակալների փոխարինում	Замена концов рулевого колеса	2499.78	2499.78	2499.78	2499.78
199	Ղեկային ճոճանակի նորոգման կոմպլեկտի փոխարինում	Замена маятникового ремкомплекта	833.2599	833.2599	833.2599	833.2599

	9. Արգելակային համակարգ	9 Тормозная система				
200	Գլխ. գլանի հանում և տեղադրում	Генерал снятие и установка цилиндров	2499.78	2499.78	2499.78	2499.78
201	Գլխ. գլանի վերանորոգում	Генерал ремонт цилиндров	2499.78	2499.78	2499.78	2499.78
202	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	Снятие и установка вакуумного усилителя	4166.3	4166.3	4166.3	4166.3
203	Բանվ. գլանի հանում և տեղադրում	Вапу снятие и установка цилиндров	2499.78	2499.78	2499.78	2499.78
204	Բանվ. գլանի վերանորոգում	Вапу ремонт цилиндров	2499.78	2499.78	2499.78	2499.78
205	Արգելակային համակարգի օդահանում	Вентилизация тормозной системы	833.2599	833.2599	833.2599	833.2599
206	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	Снятие и установка передней подвески	2499.78	2499.78	2499.78	2499.78
207	Դետևի սուպպորտի հանում և տեղադրում	Снятие и установка задней подвески	2499.78	2499.78	2499.78	2499.78
208	Առջևի սուպպորտի վերանորոգում	Ремонт передних спортивных автомобилей	1666.52	1666.52	1666.52	1666.52
209	Դետևի սուպպորտի վերանորոգում	Ремонт задней опоры	1666.52	1666.52	1666.52	1666.52
210	Արգելակային փողրակի փոխարինում	Замена тормозного шланга	833.2599	833.2599	833.2599	833.2599
211	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	Замена передних тормозных кнопок	2499.78	2499.78	2499.78	2499.78
212	Դետևի սկավառակային կոճղակների փոխարինում	Замена задних дисковых кнопок	2499.78	2499.78	2499.78	2499.78
214	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	Замена передних тормозных дисков	4166.3	4166.3	4166.3	4166.3
215	Առջևի արգելակային սկավառակների հղկում	Полировка передних тормозных дисков	3333.04	3333.04	3333.04	3333.04
216	Դետևի արգելակային սկավառակի փոխարինում	Замена заднего дискового тормоза	4166.3	4166.3	4166.3	4166.3
217	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	Снятие и установка тормозного жжима	833.2599	833.2599	833.2599	833.2599
218	ABS-ի հանում և տեղադրում	Снятие и установка АБС	4166.3	4166.3	4166.3	4166.3
219	ABS-ի վերանորոգում	Ремонт АБС	5832.819	5832.819	5832.819	5832.819
220	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	Снятие и установка каната ручного тормоза	4166.3	4166.3	4166.3	4166.3
221	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	Ремонт механизма ручного тормоза	4166.3	4166.3	4166.3	4166.3
222	Կանգնակային արգելակի կարգավորում	Регулировка подвески	833.2599	833.2599	833.2599	833.2599
	10. Էլեկտրասարքավորում	10 Электрооборудование				
224	Էլեկտրասարքավորման վերանորոգում	Ремонт электрооборудования	4166.3	4166.3	4166.3	4166.3
225	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	Снятие и установка измерительного оборудования	2499.78	2499.78	2499.78	2499.78
226	Գեներատորի հանում և տեղադրում	Снятие и установка генератора	4166.3	4166.3	4166.3	4166.3
228	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	То же самое верно для водонагревателя	4166.3	4166.3	4166.3	4166.3
229	Գեներատորի վերանորոգում	Ремонт генератора	4166.3	4166.3	4166.3	4166.3
230	Մեկնարկիչի հանում և տեղադրում	Снятие и установка стартера	4166.3	4166.3	4166.3	4166.3
231	Մեկնարկիչի վերանորոգում	Ремонт при запуске	4166.3	4166.3	4166.3	4166.3
232	Առջևի լապտերի հանում և տեղադրում	Снятие и установка переднего фонаря	2499.78	2499.78	2499.78	2499.78
233	Լապտերի կենտրոնական փոխակերպիչի փոխարինում	Замена центрального лампового преобразователя	2499.78	2499.78	2499.78	2499.78
234	Դետևի լապտերի հանում և տեղադրում	Снятие и установка заднего фонаря	833.2599	833.2599	833.2599	833.2599
235	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	Снятие и установка замка зажигания	4166.3	4166.3	4166.3	4166.3

236	Վազբաչափի հանում և տեղադրում	Снятие и установка спидометра	2499.78	2499.78	2499.78	2499.78
237	Վազբաչափի ճոպանի հանում և տեղադրում	Снятие и установка троса спидометра	2499.78	2499.78	2499.78	2499.78
238	Սաքերի պանելի հանում և տեղադրում	Снятие и установка панелей сканера	8332.599	8332.599	8332.599	8332.599
240	Ազդանշանի հանում և տեղադրում	Удаление сигнала и установка	1666.52	1666.52	1666.52	1666.52
241	Ապակեվազիչի հանում և տեղադրում	Снятие и установка стекла	83.32599	83.32599	83.32599	83.32599
242	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	Снятие и установка мотора лобового стекла	2499.78	2499.78	2499.78	2499.78
243	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	Снятие и установка центрального дверного замка	4166.3	4166.3	4166.3	4166.3
244	Ազդանշանային համակարգի տեղադրում	Установка сигнализации	20831.5	20831.5	20831.5	20831.5
245	Մագնիտոլայի վերանորոգում	Магнитола Ремонт	4166.3	4166.3	4166.3	4166.3
246	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	Снятие и установка свечей зажигания	2499.78	2499.78	2499.78	2499.78
247	Էլեկտրոլարերի մասնակի վերանորոգում	Частичный ремонт электрических проводов	4166.3	4166.3	4166.3	4166.3
248	Էլեկտրոլարերի հիսն. խուրցի հանում և տեղադրում	Электронная почта / жгут проводов удаление и установка сыпи	29164.1	29164.1	29164.1	29164.1
249	Էլեկտրոլարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	Второй / Е-провода удаление и установка сыпи	24997.8	24997.8	24997.8	24997.8
250	Էլեկտրական սովիչների փոխարինում	Замена электрических датчиков	4166.3	4166.3	4166.3	4166.3
251	Էլեկտրական անջատիչների փոխարինում	Замена электрических выключателей	2499.78	2499.78	2499.78	2499.78
252	Վառոցքի մոմերի փոխարինում	Замена свечей зажигания	2499.78	2499.78	2499.78	2499.78
253	Կոնդիցիոնների լիցքավորում	Заполнение кондиционера	9999.119	9999.119	9999.119	9999.119
254	Կոնդիցիոնների վերանորոգում	Ремонт кондиционеров	12498.9	12498.9	12498.9	12498.9
255	Կոնդիցիոնների լիցքավորման համակարգի զննում	Обзор системы зарядки кондиционеров	1666.52	1666.52	1666.52	1666.52
	11. Այլ ծառայություններ	11 Другие услуги				
